20 հուլիսի 2021թ

«ԷՄ ԴԻ ԷՅ Թրեյդ» ՍՊԸ-ի

տնօրեն Էդուարդ Փոթոյանին

Հարգելի պարոն Փոթոյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և «ԷՄ ԴԻ ԷՅ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 18.12.2020թ կնքված N Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/3-ԴԵՂԵՐ-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ շրջանակներում 21.04.2021թ. և 01.06.2021թ.-ի գնման պահանջագրին ի պատասխան /Կալցիումի կարբոնատ 500մգ և խոլիկալցիֆերոլ 400/ մատակարարումներ չեն իրականացվել, իսկ 13.07.2021թ. մատակարարված 26-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը /Կալցիումի կարբոնատ 500մգ և խոլիկալցիֆերոլ 400 / չի համապատասխանել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Համաձայն պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի՝ 13.07.2021 թվականին Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է «ԷՄ ԴԻ ԷՅ Թրեյդ» ՍՊԸ-ին և առաջարկել է 2 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, անհամապատասխանությունները չեն շտկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ վականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և պայմանագրի 8.9-րդ կետը՝ Պատվիրատուն մասնակի միակողմանի լուծում է Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/3-ԴԵՂԵՐ-1 ծածկագրով պայմանագիրը 26-րդ չափաբաժնի մասով:

«ԷՄ ԴԻ ԷՅ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրեր Հավելված 4.2 և Հավելված 5,1/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվի Կատարողի կողմից ներկայացված բանկ:

«ԷՄ ԴԻ ԷՅ Թրեյդ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհարմարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով

«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս. Բաղալյան